

ՀՈՎՈՒԱԿԱՆԱՅՆ

ՊՈՔԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՅ ՄԱՐՈՎՆԻ

ԾԱՂԿԱՔԱՂ ԻՆՆԵՐՈՐԴ

Մ Ե Ր Ի Ս

Ի ժամանակին՝ յորում Վիրգիլ ի բաշխս անդ կալուածոց զերծոյց ի ձեռն բարեկամաց իւրոց զիւրսն, որպէս յառաջնումն ի Հովուերգութեանցս ասացաք, զօրականն՝ որում անկեալ էին ի վիճակ անդաստանք նորա՝ հալածէր զնա. վասն որոյ հարկ իսկ եղեւ նմա փրկել զկեանս իւր ի լող ընդ Մինկիոս: Բայց ի գնալն իւրում ի Հոովմառ ի զերծանել ի հարստահարութենէն իշխանութեամբն Ոկտաւեայ, թողեալ էր ի վերայ կալուածոցն զՄերիս դաւառապետ, հրաման տուեալ նմա հնարել ողոքել ընծայիւք զյափշտակօղն: Արդ Մերիս ի տանել առ նա զընծայս՝ պատահէ Լիկիդայ մտերմի իւրում յուղւոջ, եւ ընդ նմա զրուցատրէ զՄենակայ՝ որ զՎիրգիլեայ բերէ աստ զգէմս. եւ պէսպէս երգովք զբօսնուն զճանապարհայն:

ԼԻԿԻԴԱՍ ԵՒ ՄԵՐԻՍ

Լիկիդաս

Յո՛, Մերիս, ի քաղաքն ուր արահետդ ածէ՝ դիմես:

Մերիս

Կենդանեաւ մերով ցայն, ո՛վ Լիկիդաս, ժամանեցաք՝
 Օ ի եկ օտար, ո՛ կասկածէր, զարտ մեր զրաւեալ՝ ժրպրհի սպառնալ.
 Ի բաց մըշակքըդ բընիկք ի բաց գնացէք, իմ է ստացուած:
 Մեք արդ նրկուն եւ տըխուր, զի զամենայն ինչ շըրջէ բախտ,
 Բզխոյս զայսոսիկ նըմա ի նուէր մատուցանեմք.
 Իցէ թէ ի սոսին բարեաւ նա մի վայելեսցէ:

Լիկիդաս

Բստուգիւ ապաքէն լըւեալ էր իմ, զի ուստի բլուրք
 Օ իջանել ըսկըսանին եւ ի դիւրին ի դարեւանդ
 10 Բզյօնսըն խոնարհել, անտի մինչեւ ցալիս ջըրոյն
 Եւ մինչեւ ցըհնաւուրց փիճւոյն գաղաթըն վաղաբէկ
 Մենակասն այն ձեր պահեալ իցէ տաղիւք զանդս անկորուստ:

Մերիս

Ի զրոյց համբաւոյն լըւեալ արդեօք իցէ քո զայն.
 Բայց այնքան տաղք մեր ի մէջ արխսական զինուց զօրեն,

Որչափ ընդդէմ արծուոյ ընդ օգս ըսպառնալից խոյացելոյ
 Վաւոնիկ աղանեաց, ո՛վ Ղիկիդաս, զօրել տան վէպք :
 Եթէ ոչ ի փապարեալ ինձ ի սղոցւոյն ձախող ագուաւ
 կարճատել աղդէր կանուխ իւ եւ իցէ հնարիւք ըզվէճ,
 Ոչ քոյդ այժմիկ կեայր Սերիս, եւ ոչ նա ինքըն Սենալիաս :

Ղիկիդաս

- 20 Ըյլ, աւանդ, իցէ՞ իսկ մարթ յայդքան ոճիր մըտաբերել .
 Փոքրը մեւս եւս ի միասին ընդ քեզ, եղո՛ւկ, ո՛վ Սենալիաս,
 Եւ քոյդ իսկ ըսիոփումն յափըշտակէր ի մէնջ ի բաց .
 Ո՞ զյաւերժհարսունս երգէր յայնժամ, ո՞ ծաղկաւէտ
 Սըփուէր յերկիր դալարի, կամ հովանի սաղարթագեղ
 Ըծէր զաղբերբք, եւ կամ ո՞ նուագէր ըզտաղբըս զոր այժմիկ,
 Ըն անձկալին Սմարիլլեակ մեր մինչ գնայիր, բարձի զանխուլ .
 “ Տիտիրէ, արածեա զուլս իմ մինչեւ գամ, սուղ է ուղին .
 ” Եւ յարօտոյ յումպ ըզնոսա ած . այլ յածել անդ, Տիտիրէ,
 ” Տես մի այծուն պատահիցես, քանզի խեթկէ նա եղջերաւ ” :

Մերիս

- 30 Կամ մանաւանդ զոր չեւ Սենալի յամբոկ ածեալ երգէր Սարեայ .
 ” Բարձր ի յաստեղս ըղբո անուն ածցեն կարապք քաղցրանըւագք,
 ” Ո՛վ Սարէ, եթէ միայն մեզ քեւ Սանտուա կացցէ մնասցէ,
 ” Եղո՛ւկ, հիբին կրեմնայ կարի մօտիկն այն Սանտուա ” :

Ղիկիդաս

- Խոյս ի կիրնեանցըն գեղձից իցիւ տացեն մեղուաց քոց պարք,
 Հովուեալք ի սինձ բերցեն, իցիւ, զըստինս արջառք քո ուռուցիկ :
 Են են եւ իմ տաղք, կացուցին քերթող եւ զիս իսկ Պիերեանք .
 Բսկըսիր թէ է ինչ քո . գուշակ եւ զիս կոչեն հովիւք,
 Ըյլ չեմնոցին դիւրահաւան, զի չեւ Սարեայ չեւ իսկ կիննայ
 Թըրիմ բաւական երգել նըւագ ինչ արժանի,
 40 Ըյլ սագ կըռչաձայն ի մէջ պորոց քաջաձայնից :

Մերիս

- Օչայդ իսկ եւ ես, ով Ղիկիդաս, մընջիկ ի միտս իմ յեղյեղեմ
 Թէ յուշ լիցի ինձ ածել . եւ չէ ինչ տաղն այն հետեւակ :
 “ Ըբի եկ, Վալատէա, զինչ ըզբօսանք են ի յալիս .
 ” Ըստ գարուն ծիրաներփեան, աստանօր մարգ շուրջ ըղգետով
 ” Սըփուէ ծաղկունս ազգի ազգի, սպիտակափառ աստ կաղամախ
 ” Սաւառնի ըզբարայրիւ, հիւսեն ճապուկ ուռք հովանի .
 ” Ըբի եկ, Թող ըստահակ ծովու զեզերս ալէկոծել ” :

Լիկիդաս

Օրհնչ էր այն՝ զոր ի քէն լուայ ընդ ջինջ գիշերաւ երգ .
Դաշինքն ի միտս իմ յածին , ըզլանգս երգոյն թէ յիշիցեմ :

Մերիս

50 “ Ըն ինչ ըզվաղեմի ելս աստեղաց դիտես , Դափնի .
” Դիփոնեաննն Կեսարու ահա ծագէ աստղ երկնաճեմ ,
” Ըստղ՝ իւ որայք հասկաթուռ զըւարճանան , իւ ողկուղակ
” Ի դարեւանդ արեգջեր գունաւորի պրտղախայծեալ .
” Տընկեա տանձիս , ո՛վ Դափնի , թուռնք ըզմիրգսն քաղեսցեն ,”
Օ ամենայն ինչ ի բաց եւ զյիշատակս իսկ ածեն ամք .
Յաճախ ի յերգս ի մանուկ տիս յիշեմ ի մայրն ածեալ զարեւ .
Ըլ ի սպառ ի մուացօնս անկան արդ տաղքն , եւ ձայն ինքնին
Խոյս ի Սերեայ ետ ի բաց , գայլք ըզՍերիս կանուխ տեսին .
Սակայն շատ իսկ Սենալիաս քեզ զայսոսիկ յեղյեղեսցէ :

Լիկիդաս

60 Ի բաղբաղայս ընդ երկար ճրգեալ ըզսէր մեր թարթափես .
Ըհա ալիք քեզ ծայր ի ծայր լռեն այժմիկ քաղցրածաւալ .
Տէս զիւրդ հողմակոծեալ օղոցն ի սպառ անկան մրուռնչք .
Ըհա ի կէս ուղոյս հասեալ կամք աստանօր , շիրիմն ահա
Բիանորի գայ յերեւան . աստ ուր մըշակք ըզթանձրախիտ
Վաղեն ի բաց ըզսաղարթ , աստ , ո՛վ Սերիս , եկ երգեսցուք .
Թո՛ղ աստ ըզխոյս , եւ դէմ եղեալ անդր ի քաղաքն անցցուք յառաջ .
Կամ գիշերոյ եթէ խիթամք կանխել ածել տեղատարափ ,
Յընթացս անդ երգեսցուք , նըւազ մեզ ուհն ածցէ վաստակ .
Եւ զի յերգել անդ ընթասցուք , ըզբենն ի բաց առնում ի քէն :

Մերիս

70 Ձեռն ի գործ պատանեկիկդ ի կարեւորս արդ արասցուք ,
Բզկայ այժմիկ ան ի յերգոց . յորժամնա ինքն այսրէն գայցէ ,
Ղահագոյն լիցի յայնժամ մեզ արկանել տաղս ի մըրմունջ :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

16. Քառնիս մասն է Եպիրոսի , բայց քառնացւոց տիրեալ երբեմն յԵպիրոս՝ անտի Քառնիա կոչեցաւ բոլորն փոխանակ մասին : Իսկ քառնի կոչել զաղաւնիս , զի ՚ի գողոնեան անտառին յԵպիրոս ՚ի կաղնեաց ետուն պատգամն ըստ առասպելին աղաւնիք երկու , մին անտի թուռցեալ ՚ի Դելփոս ՚ի մեհեանն Ապոլոնի , և միւսն ՚ի տաճար ամփոնեանն Արամազդայ , որ յայնմհետէ եկաց գաբիր հռչակաւոր :

27 . Ածէ աստ հետզհետէ հատուածս ՚ի տաղիցն՝ զոր ասաց բարձեալ գողոնի : Տիրորոս աստ է խաշնարած ոմն ՚ի համբակաց Վերգիլեայ :

31 . Կարգո իմա աստ զքերթողս , իսկ զերգելոյ կարասից տէս ՚ի ծաղկ . Ը . 56 :

33 . Մանրոս և Կրեմոս քաղաքք յայս կոյս Գաղղիոյ , առաջինն առ Մինկեալ գետով , երկրորդն առ

- Պատժութիւ : Կրեմննացիք կուսակից եղեն Անտոնիոսի ընդդէմ Ոկտաւիանեայ . վասն որոյ տպա յետ պատերազմին առաւ Կրեմննա հինաւուրց զօրայ յազթականին . և զի չէր այն բաւական , յաւելլաւ և մասն ինչ յանդատանաց Մանտուայ . վասն որոյ եղիելի և զնա կոչէ վասն սահմանակիցն գողոյ հիքին Կրեմննայ :
- 34 . Գեղձ , լա . laxus . թուի ֆնասակար , յորմէ ճարակեալ մեղուք՝ դառն գործեն մեղր . վասն որոյ խոտի մեղր Կորսիկայ վասն գեղձից և մուլանդի առաա 'ի կղզւոյն գողոյ : Եւ զկղզիս զայս , որ է 'ի միջերկրական ծովու մերձ 'ի Սարգինիա և 'ի Սիկիլիա , կոչէին Յոյնք Կիրնոս՝ յանուանէ Կիրնեայ ուրումն թագաւորի :
- 35 . Զսինձ տէս 'ի ծաղկ . Ա . 84 :
- 38 . Վարս իմա զայն , զորմէ ասացոք 'ի ծաղկ . Զ . 8 : Իսկ Կինս զմեծին Պոմպէի թուռն 'ի դատերէ , որ յառաջն թշնամի Ոկտաւիանոսի և ապա եգիտ շնորհս առ նմա , և բգեաշխ իսկ եկաց 'ի Հուովմ :
- 57 . Դիւնէա կոչէ զԿեսար , զի յԵնէասայ ասի սերեալ , և մայր Ենէայ համարի Ատողին՝ զոր Դիոնէ յաւերժհարսն ծնաւ 'ի Դիոսէ ըստ բազմաց :
- Աստանոր Մենալլաս կամ Վիրգիլիոսի առ հովիւն Դափնի բարեկամ իւր զմահուանէն Յուլիոսի Կեսարոս , յորոյ 'ի դամբանական հանգիսին վարսամ յերկինս ասի երևեալ ընդ եօթնեակ մի :
- 58 . Առասպէլն գայլոց կերկերէլ զայնոսի՝ զորս ինքեանք նախ տեսանեն , և կերկերիլ՝ եթէ ինքեանք նախ յակն անկանիցին : Աստանոր Մերիս պատճառս դադարելոյ յերգոցն ածէ զմուսացոնս իւր և զնուալուսն ձայնին , այլովքն հանդերձ , և Լիկիգաս հակառակօքն յորդորէ զնա յերգ :
- 61 . Իմա զալիս Մինկեայ գետոյ , որ թաննն զՄանտուա և զմերձակայ դաւառս :
- 64 . Բիւնուր կամ Ոկնոս արքայ Ետրուրիոյ , որդի Տիբեր գետոյ և Մանտովայ յաւերժհարսին , յորմէ անուանակոչեցաւ քաղաքն Մանտուա կառուցեալ 'ի Բիանորէ : Շիրիմ սորա առ ճանապարհաւն կայր ըստ նախնեացն սովորութեան . վասն որոյ արձանագիրք դամբանականք առ ուղևորս բարբառին . Կաց ուղևորք , Դարձիր հիւրք , և այլն :

Ասորևստան :

Ասորեստան Ասիոյ Տաճկաստանին ամենէն աւելի հարաւային մասն է , ուրուն մէջ կը բովանդակուին այն ամէն գաւառները որ կ'իյնան ընդ մէջ Տաւրոսի , Սիջերկրականին , Արջանիկն Արաբիոյ և Ագիպտոսի՝ զոր նախնիք Ափրատեան Ասորեստան , Բուռն Ասորեստան , Կելեսիւրիա և Պաղեստին կը կոչէին : Արկու շղթայք լերանց Արաբիոյ կողմէն հարաւային Ասորեստան կը մտնեն . աս շղթաներէն մէկը որ աւելի արեւմուտք կ'իյնայ՝ Սիջերկրականին երկայնութեամբը երթալով Ասորեստանը ծովէն կը բաժնէ . աս լերանց մէկ ճիւղը շատ նշանաւոր եղած է Արւմելոս և Թաբօր լերանց պատճառաւ որ աս դօսուոյս մէջը կը գտնուին . ևս առաւել Թաբօր լերան համար , որ Ս . Գրոց յիշատակութիւններէն դուրս՝ հռչակաւոր է նաև 1799^{են} Սեծին՝ Աբուլեոնի հոն ըրած մէկ պատերազմովը : Իսկ միւս շղթան գրեթէ առջինին զուգահեռական ընթացքով մը իր մէջը կը պարունակէ Սեուեալ ծովը , և առջի ճիւղին հետ միանալով կը ձևացընեն

հակալիբանան կամ Ասուրեան լերանց առաջքը՝ որ հիւսիսային սահմանաց մօտ Տաւրոսեան լերանց մեծ շղթային հետ կը միանայ . միայն հակալիբանան լերանց մէջէն ճիւղ մը կամ շղթայ մըն ալ կը բաժնուի՝ որ են բուն Լիբանանու լեռները :

Ասորեստանի զլխաւոր գետերն են Որոնդէս , Ափրատ և Յորդանան : Արկիրը լի է ձորերով ու հովիտներով . մաս մըն ալ բոլորովին անապատ է և աւազային :

Ասորեստան թէ հին և թէ նոր ատեններս իր հրաբուխներուն պատճառաւ մեծամեծ երկրաշարժներ կրած է , որոնցմէ յետինը դեռ շատին մտքին մէջ կենդանի է անշուշտ որ 1822^{են} պատահեցաւ , որով հողուն տակ թաղուեցան հալէպ , Անտիոք և ուրիշ նշանաւոր քաղաքներ : Բնակիչքը մեծաւ մասամբ Արաբացիք և Յոյնք են . ոչինչ մնացորդ մըն ալ կայ Ասորոցմէ որ Անսարի կամ Նոսարի կը կոչուին . իսկ Մեհաաւլեան ըսուածները դեռ ցայսօր կրակ կը պաշտեն . աս այլ և այլ ցեղ ժողովուրդները 60,000^{են} աւելի չեն , որոնցմէ առաջինները ընդ մէջ Լիբանան և հակալիբանան լերանց դաշտագետինները կը